ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

26.09.2023թ.

Քաղաք Իջևան

2023 թվականի սեպտեմբերի 26-ին ժամը 16 ^{00} ին կայացած

ՀՀ Տավուշի մարզի խորհրդի նիստ

1. Օրակարգի հաստատում

2. 2022-2023 թվականներին իրականացված և ընթացքի մեջ գտնվող սուբվենցիոն ծրագրերի, 2024թվականի նախնական հայտերի մասին

Զեկուցող՝ Գ. Հարությունյան – ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ

3. ՀՀ Տավուշի մարզի համայնքների 2023թ. տեղական բյուջեների սեփական եկամուտների կատարման ընթացքը

Զեկուցող՝ Ա. Բաբլումյան- ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ

4. ՀՀ Տավուշի մարզում գյուղատնտեսական աշխատանքների ընթացքը/բերքահավաք,ՀՀ կառավարության կողմից ոլորտում իրականացվող ծրագրերի իրազեկման աշխատանքներ/

Զեկուցող՝ Վ. Սուքոյան – ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ

5.ՀՀ Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում 2023-2024 ուս. տարվա մեկնարկի , կրթական գործընթացի կազմակերպման հիմնական խնդիրների մասին

Զեկուցող՝ Մ.Հարությունյան - ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի կրթության,մշակույթի և սպորտի վարչության պետ

6. Այլ հարցեր

Նիստը վարում էր ՀՀ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը:
Ներկա էին մարզի խորհրդի բոլոր անդամները:
Մասնակցում էին իրավապահ մարմինների մարզային կառույցների ղեկավարները, մարզպետի աշխատակազմի ենթակայության առողջապահական, մարզի կրթական հաստատությունների, ՄՄԾ տարածքային կենտրոնների ներկայացուցիչներ:
Մասնակցում էին մարզպետի տեղակալը, մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարը, մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարները:

Մինչ մարզխորհրդի հիմնական հարցերի քննարկմանն անցնելը, մարզպետը անդրադարձավ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ՀՀ Տավուշի մարզում ընդունելու, տեղավորելու և համակարգված հաշվառելու գործընթացի ուղղությամբ տարվող աշխատանքների կազմակերպման հարցերին: Մարզպետը նշեց, որ իրավիճակի հետ կապված ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմում ստեղծվել է աշխատանքային խումբ, որը կհամակարգի աշխատանքները, հետևողական կլինի դրանց ընթացքին:

Խնդրի հետ կապված հանձնարարականներ տրվեցին բոլոր ոլորտների ներկայացուցիչներին: Մարզպետը նշեց, որ Արցախից բռնի կերպով տեղահանված մեր եղբայրներին ու քույրերին մարզում տեղավորելու հարցերում անելիք ունեն բոլոր ոլորտների ներկայացուցիչները՝ Մարզպետի աշխատակազմը, համայնքապետարանները, ՄՄԾ-ները, կրթական և առողջապահական հասատատությունները:

2. . 2022-2023 թվականներին իրականացված և ընթացքի մեջ գտնվող սուբվենցիոն ծրագրերի, 2024թվականի նախնական հայտերի մասին

Զեկուցող՝ Գ. Հարությունյան – ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ

Զեկուցողը ներկայացրեց Տավուշի մարզում ընթացքի մեջ գտնվող, ինչպես նաև 2024 թվականին սուբվենցիոն ծրագրերով նախատեսվող աշխատանքները:

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՄԱՍԻՆ

ՈՒՂԱՐԿՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ			17.07						11.09
հ/հ	Համայնք	Ծրագրի անվանումը	Ծրագրի ընդհանուր արժեքը/մլն դրամ/	Համայնքի ներդրումը/մլն դրամ/	Համայնքի %-ը	Այլ ներդնողներ/մլն դրամ/	Այլ ներդրողի %-ը	ՀՀ կառավ. Ներդր./մլն դրամ/	
1	Իջևան	Իջևան համայնքի՝ Իջևան քաղաքի և Այգեհովիտ բնակավայրի Կայան-ավան թաղամասի բազմաբնակարան շենքերի տանիքների կապիտալ վերանորոգում	182.7	54.9	30.0	18.2		109.6	
2	Իջևան	Իջևան համայնքի Իջևան քաղաքի Երիտասարդական 61, համայնքապետարանի շենքի ետնամասում գտնվող մասնաշենքի և Այգեհովիտ բնակավայրի վարչական շենքի հիմնանորոգում	129.1	51.6	40.0			77.5	
3	Իջևան	Իջևան համայնքի Իջևան քաղաքի և Ծաղկավան բնակավայրի ճանապարհների հիմնանորոգում, ասֆալտապատում	147.7	66.4	45.0			81.3	Ծաղկավանը չկա
4	Իջևան	Իջևան համայնքի Իջևան քաղաքի և Կիրանց բնակավայրի ճանապարհների հիմնանորոգում և սալարկում տուֆ քարով	164.3	57.4	35.0			106.9	Կիրանցը չկա
5	Իջևան	Իջևան համայնքի Իջևան քաղաքի ջրահեռացման համակարգի և կոյուղագծերի կառուցում և Խաշթառակ բնակավայրի ջրամատակարարման համակարգերի արդիականացում	248.0	74.4	30.0			173.6	Խաշթառակը մրցույթը հայտարարված է
6	Իջևան	Իջևան համայնքի Բերքաբեր,Կիրանց, Աճարկուտ բնակավայրերի գազիֆիկացում	320.1	112.0	35.0			208.1	
	6	Ընդամենը Իջևան	871.8	304.7		18.200		548.9	
1	Բերդ	Բերդ համայնքի Բերդ, Նավուր, Արծվաբերդ, Այգեպար, Չինարի, Նորաշեն, Իծաքար, Վ.Կ.Աղբյուր բնակավայրերում ներհամայնքային ճանապարհների և բակային տարածքների ասֆալտապատում	180.0	54.0	30.0			126.0	
2	Բերդ	Բերդ համայնքի Նորաշեն բնակավայրի նոր մանկապարտեզի շենքի կառուցում, Տավուշ, Վ. Ծաղկավան, Չինչին, Վ. Կ Աղբյուր՝ Բերդի թիվ 3 և թիվ 2 մանկապարտեզների շենքերի վերանորոգում	250.0	50.0	20.0			200.0	
3	Բերդ	Բերդ համայնքի Վ.Կ.Աղբյուր, Արծվաբերդ, Նորաշեն գյուղերի խմելու ջրի ա/ց կապիտալ վերանորոգում, Մովսես, Այգեձոր, Չորաթան, Վ.Կ.Աղբյուր, Ն.Կ.Աղբյուր, Չինարի, Չինչին, Նավուր բնակավայրերի խմելու ջրի ն/ց վերանորոգում	280.0	54.0	30.0			226.0	
4	Բերդ	Տավուշի մարզի նորաշեն գյուղի ոռոգման համակարգի արդիականացում	100.0	30.0	30.0			70.0	
	4	Ընդամենը Բերդ	810.0	188.0				622.0	
1	Դիլիջան	Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի 5 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգում	95.4	47.7	50.0	9.53	10	38.2	
2	Դիլիջան	Դիլիջան համայնքի Աղավնավանք բնակավայրում ներգյուղական փողոցների տուֆապատում	91.2	36.5	40.0			54.7	
3	Դիլիջան	Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Գետափնյա փողոցի ասֆալտապատում և մայթերի վերանորոգում	850.7	510.4	60.0			340.3	
4	Դիլիջան	Դիլիջան համայնքի Գոշ բնակավայրի խմելու ջրագծերի հիմնանորոգում և ջրաչափերի տեղադրում	148.4	52.0	35.0			96.4	
5	Դիլիջան	Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրի վարչական շենքի և համայնքային կենտրոնի վերանորոգում	107.8	59.3	55.0			48.5	
6	Դիլիջան	Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի վերանորոգում	90.7	27.2	30.0			63.5	
7	Դիլիջան	Դիլիջան համայնքի Խաչարձան բնակավայրի վարչական շենքի և համայնքային կենտրոնի վերանորոգում	101.6	55.9	55.0			45.7	
8	Դիլիջան	Դիլիջան համայնքի Հաղարծին բնակավայրի հանդիսությունների սրահի վերանորոգում	104.0	57.2	55.0			46.8	
9	Դիլիջան	Դիլիջան համայնքի Հաղարծին բնակավայրում ջրաչափական դիտահորերի կառուցում և ջրաչափերի տեղադրում և Դիլիջան համայնքի Հովք բնակավայրում խմելու ջրագծերի ներքին ցանցի կառուցում և ջրաչափերի տեղադրում	151.0	52.8	35.0			98.2	
10	Դիլիջան	Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի օղակաձև այգու բարեկարգում և վերգետնյա հետիոտնային անցումների կառուցում	82.2	53.4	65.0			28.8	
11	Դիլիջան	Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Մյասնիկյան-Սայաթ-Նովա-Աղստև սելավատարի հիմնանորոգում	216.1	86.4	40.0			129.7	
	11	Ընդամենը Դիլիջան նախատեսված	2039.1	1038.8		9.530		990.8	
1	Նոյեմբերյան	Նոյեմբերյան խոշորացված համայնքի Կողբ, Բերդավան , Ոսկեպար, Դեղձավան և Բագրատաշեն բնակավայրերի փողոցների ասֆալտապատում	160.0	72.0	45.0	0.0		88.0	
2	Նոյեմբերյան	Նոյեմբերյան խոշորացված համայնքի Պտղավան և Ոսկեվան բնակավայրերի համայնքային կենտրոնների կառուցում	110.0	44.0	40.0			66.0	
3	Նոյեմբերյան	Տավուշի մարզի Դեբեդավան գյուղի ոռոգման համակարգի արդիականացում	120.0	42.0	35.0			78.0	
4	Նոյեմբերյան	Նոյեմբերյան խոշորացված համայնքի Ոսկեվան և Կոթի բնակավայրերի խմելու ջրի համակարգի կառուցում և արդիականացում	200.0	60.0	30.0			140.0	
5	Նոյեմբերյան	Նոյեմբերյան խոշորացված համայնքի Կողբ, Նոյեմբերյան,Այրում,Կոթի և Արճիս բնակավայրերի փողոցների տուֆապատում	260.0	78.0	30.0			182.0	
6	Նոյեմբերյան	Նոյեմբերյան խոշորացված համայնքի Կողբ բնակավայրում նոր մանկապարտեզի կառուցում և Նոյեմբերյան 1, Կողբի 2, Բերդավան, Արճիս և Պտղավան գյուղերի մանկապարտեզների բակերի բարեկարգում և ներառական հարմարեցում	625.0	125.0	20.0			500.0	
	6	Ընդամենը Նոյեմբերյան	810.0	421.0		0.0		389.0	
	27	ԸՆԴԱՄԵՆԸ ՄԱՐԶՈՒՄ	4530.9	1952.5		27.7		2550.7	

Որոշվեց՝

շարունակել մարզպետի աշխատակազմի և համայնքապետարանների համապատասխան մասնագետների կողմից վերահսկողություն իրականացնել ընթացքի մեջ գտնվող սուբվենցիոն ծրագրերի նկատմամբ:

Սուբվենցիոն ծրագրով իրականացված աշխատանքների կատարման ավարտից հետո, մեկշաբաթյա ժամկետում, մարզպետի աշխատակազմ ներկայացնել տվյալ ծրագրի վերաբերյալ վերջնական հաշվետվություն, որն ամրագրված է մարզպետի աշխատակազմի և համայնքի ղեկավարի միջև կնքված սուբվենցիայի հատկացման պայմանագրում:

3. . ՀՀ Տավուշի մարզի համայնքների 2023թ. տեղական բյուջեների սեփական եկամուտների կատարման ընթացքը

Զեկուցող՝ Ա. Բաբլումյան - ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ

Զեկուցողը նշեց, որ մարզի համայնքների 2023 թ. տեղական բյուջեների տարեկան նախատեսված եկամուտների հանրագումարը կազմել է 7 մլրդ 58 մլն 20,1 հազ դրամ, այդ թվում՝ սեփական եկամուտները կազմել են 2 մլրդ 92 մլն 738,5 հազ դրամ, որը կազմում է ընդհանուր գումարի 29.7 %-ը:

2023 թվականի սեպտեմբերի 15-ի դրությամբ ՀՀ պետական բյուջեից սուբվենցիոն ծրագրերի ֆինանսավորումը կազմել է 1 մլրդ 2 մլն 81,3 հազ դրամ, կամ կատարվել է 96.7 %-ով:

2023 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ մարզի համայնքների եկամուտների փաստացի ընդհանուր մուտքը կազմել է 4 մլրդ 716 մլն 192,7 հազ դրամ, կամ կատարվել է 86.3 %-ով 9 ամսվա նկատմամբ և 66.8 %՝ տարեկանի պլանի նկատմամբ: Սեփական եկամուտների հավաքագրումը կազմել է 915 մլն 500,3 հազ դրամ,իսկ կատարողականը 9 ամսվա նկատմամբ՝ 85.7 %, տարեկանի պլանի նկատմամբ՝ 65.1 %,:

Ըստ առանձին եկամտատեսակների սեփական եկամուտների ութ ամսվա կատարողականներն ունեն հետևյալ տեսքը.

- անշարժ գույքի հարկ – տարեկան ծրագրով նախատեսվել է 343.9 մլն դրամ, որի դիմաց հավաքագրվել է 133.9 մլն դրամ, կամ կատարվել է 53.1 %-ով 9 ամսվա նկատմամբ և 38.8 % տարեկանի նկատմամբ,
- գույքահարկ փոխադրամիջոցների համար - տարեկան ծրագրով նախատեսվել է 724.9մլն դրամ, որի դիմաց հավաքագրվել է 518.2 մլն դրամ, կամ կատարվել է 98.3 %-ով 9 ամսվա նկատմամբ և 71.5 % տարեկանի նկատմամբ,
- տեղական տուրքեր – տարեկան ծրագրով նախատեսվել է 69,8 մլն դրամ, որի դիմաց հավաքագրվել է 48.9 մլն դրամ, կամ կատարվել է 93.7 %-ով 9 ամսվա նկատմամբ և 70.1 % տարեկանի նկատմամբ,

- գույքի վարձակալությունից եկամուտներ – տարեկան ծրագրով նախատեսվել է 141,9 մլն դրամ, որի դիմաց հավաքագրվել է 42.3 մլն դրամ, կամ կատարվել է 40.7 %-ով 9 ամսվա նկատմամբ և 29,8 % տարեկանի նկատմամբ,

- տեղական վճարներ– տարեկան ծրագրով նախատեսվել է 420,0 մլն դրամ, որի դիմաց հավաքագրվել է 228.8 մլն դրամ, կամ կատարվել է 72.7 %-ով 9 ամսվա նկատմամբ և 54,5% տարեկանի նկատմամբ,

Սեփական եկամուտների եկամտատեսակների մեջ ամենացածր կատարողականն ունեն գույքի վարձակալությունից եկամուտները (40.7 %՝ 9 ամսվա նկատմամբ, 29.8 %՝ տարեկանի նկատմամբ) և անշարժ գույքի միասնական հարկը (53.1%՝ 9 ամսվա նկատմամբ, 38.8 %՝ տարեկանի նկատմամբ):

Այսպիսով ՝ 2023 թվականի սեպտեմբերի 15-ի դրությամբ մարզի համայնքների սուբվենցիոն ծրագրերի ֆինանսավորումը կազմել է 96.7 %, թերֆինանսավորումը կազնել է 34.7 մլն.դրամ:

Հաշվի առնելով, որ արդեն սկսվել է 2024 թվականի բյուջեների կազմման գործընթացը, համայնքների ղեկավարներին առաջարկվում է ապահովել տեղական բյուջեների նախագծերի կազմումը և սահմանված ժամկետում ներկայացնել ավագանիների քննարկմանը և հաստատմանը:

4. ՀՀ Տավուշի մարզում գյուղատնտեսական աշխատանքների ընթացքը/բերքահավաք,ՀՀ կառավարության կողմից ոլորտում իրականացվող ծրագրերի իրազեկման աշխատանքներ/

Զեկուցող՝ Վ. Սուքոյան – ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ

Զեկուցողը ներկայացրեց, որ մարզի գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը ըստ հողային հաշվեկշռի կազմում են 110665,6 հա, որից՝ վարելահող -25485,3հա, բազմամյա տնկարկներ – 1981,8հա, այդ թվում՝ խաղողի այգիներ -1195,3 հա, պտղատու այգիներ- 786,5 հա, խոտհարքներ - 9400.6 հա, արոտավայրեր- 63006 հա, այլ՝ 10791,8 հա:

25485.3 հա վարելահողից 7210.7 հա-ը սահմանամերձ լինելու պատճառով չի մշակվում: 18275 հա փաստացի վարելահողից 2023թ. ցանքատարածությունները 2022թ. 5323 հա-ի դիմաց կազմել են 6220,6հա /+ 897,6 հա/:

2022թ. ՀՀ Կառավարության 11 օգոստոսի 2022 թվականի N 1313-Լ որոշմամբ իրականացվեց ,,Հայաստանի Հանրապետությունում աշնանացան ցորենի արտադրության խթանման 2022 թվականի պետական աջակցության ծրագիր,, որը նպաստեց մարզում աշնանացանի ցանքատարածությունների ավելացմանը: Կատարվեց 3683,9 հա աշնանացան /+1273,9 հա 2021թ. նկատմամբ/, որից ծրագրի շրջանակներում՝ 2671,4հա: Ծրագրից օգտվեց 1948 շահառու:

Մարզի համայնքներում ընթացքի մեջ են բերքահավաքի աշխատանքները:01.09.2023թ.դրությամբ արտադրվել է.

հացահատիկ,հատիկաընդեղեն-7152տոննա,

կարտոֆիլ – 2504 տոննա,

բանջարեղեն -1892 տոննա,

բոստան-191 տոննա

պտուղ,հատապտուղ - 2903 տոննա,

կուտակվել է 33865 տոննա խոտ,

ծղոտ-733 տոննա:

Մարզում սկսվել են խաղողի բերքահավաքի և մթերման աշխատանքները: 26.09.2023թ.դրությամբ մթերվել է 1140 տոննա խաղող :

Որոշվեց՝

Շարունակել հետևողական լինել բերքահավաքի ընթացքին, պարբերաբար հավաքագրել և ներկայացնել տեղեկատվությունը, խոչընդոտներ առաջանալու դեպքում աջակցել և գյուղացիական տնտեսություններին, և մթերող կազմակերպություններին:

5. ՀՀ Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում 2023-2024 ուս. տարվա մեկնարկի , կրթական գործընթացի կազմակերպման հիմնական խնդիրների մասին

Զեկուցող՝ Մ.Հարությունյան - ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի կրթության,մշակույթի և սպորտի վարչության պետ

Զեկուցողը ներկայացրեց , որ 2022-2023 ուսումնական տարում մարզպետի աշխատակազմի ենթակայության 76 դպրոցում սովորել է 15873 աշակերտ, դասարանների թիվը 966 է: 1-ին դասարանցիների թիվը 2022-2023 ուստարում 1467 է: Ավագ դպրոցներում սովորել է 940 աշակերտ: 2023-2024 ուստարում աշակերտների թիվը 15715: 1-ին դասարանցիների թիվը՝ 1427-է: Դասարանների թիվը՝ 969 է: 2023-2024 ուստարում ավագ դպրոցներում սովորում է 925 աշակերտ: 2023 թվականին Տավուշի մարզից Գնահատման և թեստավորման կենտրոնի dimord.am կայքում դիմում-հայտ է լրացրել 674 դիմորդ: Մրցույթի հիմնական փուլում ընդունվել է մասնագիտություն հայտագրած դիմորդներից 442-ը (66,3%):

Մարզում գործում է 53 նախադպրոցական ուսումնական հաստատություն, մոտ 3400 սանով:

2023-2024 ուստարում Տավուշի մարզի պետական հանրակրթական դպրոցների բոլոր դասարաններում կիրառվում են առարկայական նոր չափորոշիչները և ծրագրերը:

Հանրակրթության պետական նոր չափորոշչում առանձնահատուկ շեշտադրում ունի բնագիտա-մաթեմատիկական առարկաների կրթության որակի բարձրացումը, որի շրջանակում մարզի բոլոր դպրոցներն ապահովվել են անհրաժեշտ լաբորատոր սարքավորումներով և գույքով, որը թույլ կտա այդ առարկաների ուսուցումը դարձնել իրապես փորձարարական: Այս ուսումնական տարում բնագիտական առարկաներ

դասավանդող ուսուցիչները և մինչև 100 աշակերտ ունեցող դպրոցների ուսուցիչները կստանան հավելավճար:2023-2024 ուսումնական տարում փոխվել է նաև դպրոցների ֆինանսավորման կարգը, ֆինանսավորումն իրականացվելու է ըստ դասարանների թվի:

Հանրակրթության ոլորտում կարևորվում է կամավոր ատեստավորման գործընթացը: Մասնավորապես, մարզի 26 դպրոցից 47 ուսուցիչ կամավոր ատեստավորման արդյունքում ստանում է 30-50 տոկոս հավելավճար: Վերոնշյալ ուսուցիչներից 16-ը կամավոր ատեստավորվել է 2021 թվականին, իսկ 31-ը՝ 2022 թվականին: Կամավոր ատեստավորման արդյունքում փոխվել է նաև ուսուցչի դրույքաչափը՝ այն կազմում է 200.000 դրամ մեկ դրույք զբաղվածության համար, որի նկատմամբ կիրառվում է համապատասխան չափով հավելավճար: 2021 թվականին կամավոր ատեստավորված վերոնշյալ 16 ուսուցչից 6-ը 2022 թվականին կրկնակի ատեստավորվել են՝ ինչի արդյունքում մասնակիորեն ավելացել է նրանց տրամադրվող հավելավճարը: Կամավոր ատեստավորված ուսուցիչներից 3-ն ունի նաև տարակարգ: 2023թ կամավոր ատեստավորման գործընթացը սկսվել է սեպտեմբերի 23-ին և կավարտվի 2023 թվականի հոկտեմբերի 8-ին: Տավուշի մարզի 22 դպրոցից տարակարգ է ստացել 42 ուսուցիչ:

Արտադպրոցական հաստատություններից, մասնավորապես երաժշտական դպրոցներից կամավոր ատեստավորվել է 5 ուսուցիչ, որից 3-ը ստանում է հավելավճար /2-ը Իջևանի երաժշտական միջնակարգ դպրոցից, 1-ը Բագրատաշենի միջնակարգ դպրոցից/:

2023-2024 ուսումնական տարում դպրոցականների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլում Տավուշի մարզի աշակերտներն արժանացել են 10 դիպլոմի:

Համաձայն ՀՀ կառավարության 2023թ. հունիսի 16-ի N977-Ն որոշման՝ վերանորոգման աշխատանքներ են իրականացվելու Այրումի, Կոթիի, Բագրատաշենի թիվ 1, Արծվաբերդի թիվ 1, Այգեձորի, Նոյեմբերյանի թիվ 1, Կողբի թիվ 1 և Սևքարի դպրոցներում:

Կրթահամալիրներ են կառուցվելու Լուսաձոր, Պտղավան, Աղավնավանք, Նորաշեն և Ոսկեվան բնակավայրերում:

ՄԱՐԶՊԵՏ Հ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

06.10.2023

X